

ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ԱՍՏՎԱԾ

Արքայական սուվերենության գաղափարաբանական հիմունքները Բագրատունյաց Հայաստանում*

Բանալի բառեր – Հայաստան, Բագրատունիներ, Արծրունիներ, Բյուզանդական կայսրություն, բասիլևս, թագավոր, օծում, շնորհ, ինվեստիտուրա, սուվերենություն:

Հռոմեական կայսրերը՝ Օգոստոսից մինչև Դիոկղետիանոս (մ.թ.ա. I դ. վերջերից – մ.թ. III դ. վերջ), իրենք էին թագադրում Հայաստանի արքաներին՝ դրանով իսկ յուրացնելով թագավորական արժանավորությունը շնորհող աստծո գործառույթը¹: Հռոմեական կայսրության գերակայությունը հայոց թագավորության նկատմամբ ուներ հեթանոսական կրոնագաղափարաբանական հիմքեր: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով՝ Տրդատ III-ը մերժեց հռոմեական հեթանոս կայսեր աստվածայնությունը, հայոց արքայի հետ հարաբերություններում գերագույն կարգադիր աստանի դերում հանդես գալու նրա հավակնությունները²: Դրանով Հայաստանում վերականգնվեցին թագավորական իշխանության աստվածակարգ բնույթը և սուվերենությունը (ինքնիշխանությունը)³: Ուստի IV դարի կեսին, Ներսես Մեծի հայտարարությամբ, արքան բնիկ տեր էր՝ տրված Աստծուց, նրա կողմից ստեղծված:

Աշոտ I Բագրատունու օրոք՝ 884 թ., Հայաստանը վերականգնեց թագավորության իր կարգավիճակը: Երկրի անկախության տվյալ պատմաշրջանում թագավորական սուվերենության վերահաստատումն ընթանում էր Բյուզանդական կայսրության և խալիֆաթի չդադարող ծավալապատական նկրտումների պայմաններում:

* Սույն ուսումնասիրությունը մեր «Les fondements idéologiques de la souveraineté royale en Arménie Bagratide: le roi et Dieu» (in “Ani capitale de l’Arménie en l’an mil”, Paris, 2001, pp. 125-129) հոդվածի ընդարձակված տարբերակն է: Ընդունվել է տպագրության 16.02.2022:

«Սուվերենություն» հասկացությունը ենթադրում է իշխանության աղբյուրի լիակատար անկախություն, ինչը Միջնադարում ենթադրում էր միապետի (տիրակալի) անսահմանափակ գերակայություն: Այսինքն սուվերենությունը հասկացվում էր իբրև թագավորի իշխանության անմիջական ստանձնում Աստծուց. «Թագավորը միայն Աստծուն է ենթակա, իսկ ամենքը թագավորին» (Коровин Е. А., История международного права (от древности до конца XVIII века), М., 1946, с. 21): XVIII դ. վերջերից «միապետի սուվերենություն» հասկացությունը փոխարինվեց «ժողովրդական սուվերենություն» հասկացությամբ:

1 Տես Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Եր., 1997, էջ 73-136:

2 Տես նույն տեղում, էջ 180:

3 Տես նույն տեղում:

Բյուզանդական կայսերապաշտական տեսության համաձայն՝ կայսրը երկրի վրա Աստծո տեղապահն է⁴ և գերագույն դիրք է գրավում քրիստոնյա աշխարհի հիերարխիայում⁵: Հերակլես կայսրից սկսած (629 թ.)՝ բյուզանդական կայսրերն իրենց «բասիլևս» («թագավոր») տիտղոսի⁶ մենատեր էին համարում և մերժում էին այն կրելու՝ հարևան քրիստոնյա միապետների իրավունքը⁷: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Հայաստանի քաղաքական պատմությանը նվիրված հետազոտություններում, ինչպես հարկն է, հաշվի չեն առնվել պետության և ինքնիշխանության հաստատման խնդրում աստվածաշնչյան պատկերացումների նշանակությունը, թագադրման արարողակարգի գաղափարաբանական խորհուրդը, դրանց կարևորությունը պետության միջազգային-իրավական կարգավիճակի գնահատման համար⁸: Ինչպես հայտնում է Հովհաննես Դրասխանակերտցին, Բագրատունիների հարստության հիմնադիր Աշոտ I-ի հանդիսավոր թագադրմանը նախորդել է ավագանու՝ նախարարների և իշխանների միաբան որոշումը նրան իրենց թագավոր կարգելու մասին: Ինքնական ընդունված այդ որոշումը, անշուշտ, արտացոլում էր իշխանաց իշխան Աշոտի՝ Հայաստանում իրական տիրապետող դիրքը: Որոշմանը հաջորդեց ավագանու դիմումը արաբական կողմին՝ Աշոտին հայոց թագավոր ճանաչելու վերաբերյալ: Ի պատասխան՝ խալիֆը Աշոտին ուղարկեց թագ և արքային արժանավայել ընծաներ:

Վիմագրական տվյալները վկայում են, որ Աշոտը թագավորի տիտղոս էր կրում արդեն 874 թ.⁹, այսինքն՝ իր թագադրությունից դեռևս տասը տարի առաջ, երբ նրան պաշտոնապես ճանաչեց խալիֆաթը, և օրհնեց ու թագադրեց կաթողիկոսը: Իր աշխատության մեջ՝ Աշոտ I-ի կառավարման ժամանակաշրջանին նվիրված էջերում, որոնք Շապուհ Բագրատունու տվյալների համառոտագրությունն են, Հովհաննես Դրասխանակերտցին, ամենայն հավանականությամբ, իրար է միացրել միմյանցից առնվազն տասը տարով բաժանված իրադարձությունները՝ ավագանու ժողովը և թագադրությունը: Ակներևաբար 874 թ. Հայաստանում թագավոր դառնալու համար Աշոտ Բագրատունուն բավական էր նախարարների միաձայն որոշումը, այսինքն՝ վճռորոշ էր աշխարհիկ բնույթի քաղաքական ակտը: Այստեղ ի հայտ եկավ այն պատկերացումը, որ թագավորի հռչակման՝

4 Տե՛ս **Ahrweiler H.**, L'idéologie politique de l'Empire byzantine, Paris, PUF, 1975, էջ 20-21, 138-139, 143-145:

5 Տե՛ս **Литаврин Г. Г.**, Политическая теория в Византии с половины VI века до начала XIII. – Культура Византии (VI-XII вв.), М., 1989, էջ 59-88:

6 Տե՛ս **Курбатов Г. Л.**, Политическая теория в ранней Византии. Идеология императорской власти и аристократическая позиция. – Культура Византии. IV-первая половина VIII в., М., 1984, էջ 117, **Литаврин Г. Г.**, նշվ. աշխ., էջ 61:

7 Տե՛ս **Юзбашян К. Н.**, Армянские государства эпохи Багратидов IX-XI вв., М., 1988, էջ 83:

8 Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հատ. 2, Եր., 1947, էջ 511-599, **Grousset R.**, Histoire de l'Arménie, sec. éd, Paris, 1973, էջ 481, **Առաքելյան Բ.**, Հայաստանը Բագրատունյաց ժամանակաշրջանում, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Եր., 1976, էջ 53, **Վարդանյան Վ.**, Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը (X դ. 30-ական թթ. - XI դ. սկիզբ), «Հայոց պատմություն», հատ. 2, գիրք 2, Եր., 2014, էջ 52:

9 Տե՛ս **Тер-Гевондян А. Н.**, Армения и арабский Халифат, Ер., 1977, էջ 235:

ավագանու հավաքական կամքի արտահայտման մեջ (միաբան խորհրդում) արդեն իսկ առկա է աստվածային կամքը: Այս պատկերացումը թերևս ընդօրինակված էր բյուզանդական քաղաքական փորձից: 473 թ. Լևոն I-ը իրեն կայսր ընտրելու Սենատի և բանակի որոշումը մեկնաբանեց իբրև Աստծո վճռի արտահայտություն¹⁰: Կայսեր հռչակման աշխարհիկ ձևին առաջնակարգ նշանակություն էր տրվում նաև Գերմանիայում (XIII դ.), որտեղ այն ստացել էր տեսական հատուկ հիմնավորում¹¹:

884 թ. Աշոտ I-ի թագադրությունը նշանավորեց էական տեղաշարժեր գերագույն իշխանության տեսական-գաղափարաբանական հիմնավորման մեջ: Թագավորական իշխանության ստանձնման արարողակարգում սկսում է կարևորագույն դեր կատարել եկեղեցին: Կաթողիկոսի մասնակցությունը վճռորոշ էր՝ նկատի առնելով այն փաստը, որ առաջին Բագրատունիների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ II) կողմից թագավորական իշխանության ստանձնումը ձևակերպված էր որպես խալիֆից իշխանության շնորհում՝ **ինվեստիտուրա**: Բագրատունիներին թագի առաքմամբ խալիֆաթը նրանց թագադրությունը դիտարկում էր իբրև իր գերակայության վերահաստատում: Սակայն թագադրությանը կաթողիկոսի ստանձնած գործառնություններն ի չիք էին դարձնում խալիֆից թագի ընդունման քաղաքական նշանակությունը:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Աշոտ I-ի (884 թ.) և Սմբատ I-ի (890 թ.) թագադրմանը կաթողիկոսը՝ Գեորգ հայրապետը, օրհնություն էր տալիս նրանց և թագադրում¹²: Այդպես էր գործում նաև Կոստանդնուպոլսի պատրիարքը կայսեր թագադրման արարողության ժամանակ¹³: Ֆրանսիացի ականավոր պատմաբան Մ. Բյուկի դիտարկմամբ՝ թագը, որ հանձնվում էր եկեղեցու առաջնորդի ձեռքով, ուներ «սրբազան բնույթ» (*caractère sacré*)¹⁴: Հայաստանում քրիստոնեական կրոնի առաջնորդի այդ գործողությունները խորհրդանշում էին Բագրատունիների իշխանության իսկական աղբյուրը՝ Աստծուն: Այդուհետ արքայի աստվածակարգությունը (*богоустановленность*) իրագործվում էր եկեղեցական թագադրման միջոցով:

908 թ. Գագիկ Արծրունու՝ արաբ ամիրա Յուսուֆից թագ ընդունելու կապակցությամբ Թովմա Արծրունու աշխատության շարունակողը բերում է այն ուշագրավ դատողությունները, որոնք ներկայացնում են խալիֆաթի կողմից հայ իշխանավորին թագի հանձնման պաշտոնական հայկական մեկնությունը: Այն հիմնվում էր իշխանության աստվածային ծագման մա-

10 Տե՛ս *Острогорский Г. А.*, Эволюция византийского обряда коронования.- Византия, Южные славяне и древняя Русь. Западная Европа, М., 1973, էջ 33-42:

11 Տե՛ս *Bloch M.*, Les rois thaumaturges. Études sur le caractère surnaturel attribué à la puissance royale, particulièrement en France et en Angleterre. Préface de Jacques Le Goff, Paris, 1993, էջ 218:

12 Տե՛ս *Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու* Պատմություն Հայոց, Եր., 1996, էջ 150:

13 Տե՛ս *Острогорский Г. А.*, նշվ. աշխ., էջ 34:

14 Տե՛ս *Bloch M.*, նշվ. աշխ., էջ 70:

սին Պողոս առաքյալի հռչակավոր հիմնադրույթի վրա: 908 թ. Սմբատ Բագրատունու հակառակորդ Գագիկը ոչ միայն թագ ընդունեց Յուսուֆից, այլև թագադրվեց նրա կողմից: Հայ պատմիչը այս իրադարձության մասին այն ուշագրավ միտքն է արտահայտում, որ մահմեդական ամիրան իրականում ակամա կատարեց Աստծո կամքն ու հրամանը¹⁵:

Քրիստոնյային բնորոշ ըմբռնմամբ՝ հայ պատմիչը գտնում է, որ իրականում աներևութաբար իրագործվեց Գագիկի օծումը Սուրբ Հոգուց («...գօծումն սորա աներևութաբար լեալ ի Հոգւոյն Սրբոյ»¹⁶): Ի հաստատումն այդ ձգնարտության՝ պատմիչը վկայակոչում է Պողոս առաքյալի դրույթը. «...ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ և որ էն յԱստուծոյ է կարգեալ»¹⁷: Պատմիչի վկայությամբ՝ Աստված որպես **իր շնորհին** արժանավորի («...արժանի իւրոցն լինել շնորհաց»)՝ Գագիկ Արծրունուն կանխանշեց լինել թագավոր¹⁸: Այսպիսով, քրիստոնյա հեղինակի ըմբռնմամբ, Գագիկի 908 թ. թագադրումը արտահայտում էր մի խորհուրդ, որն անհայտ է մնացել Յուսուֆին և խալիֆ Մուկթադիրին (Մուկդիր)¹⁹:

Մատենագիրը հրձվանքով է խոսում Գագիկի թագադրման արարողության մասին: Համեմատությունը, որը նա կիրառում է Գագիկ Արծրունուն նկարագրելիս («իբրև զարեգակն ի մէջ աստեղաց»²⁰), տանում է դեպի արքայի մասին վաղնջական հեթանոսական պատկերացումները:

Մեծ տերությունների միջամտությունների պայմաններում իշխանության աստվածատուր լինելու մասին քրիստոնեական դրույթը գաղափարաբանական կովան էր հայերի համար՝ նրանց գիտակցության մեջ անսասան պահելով թագավորի իշխանության՝ որպես աստվածակարգ հաստատության հեղինակությունը՝ անկախ քաղաքական կոնկրետ իրավիճակներից: Հարկ է արձանագրել, որ Աստծու ընծայած շնորհը հայ ժամանակակիցները համարում էին գերակա քաղաքական կախվածությունը խորհրդանշող արարողության նկատմամբ, որը խալիֆաթը դեռ պարտադրում էր Արծրունի առաջին թագավորներին:

Հատուկ ուշադրության են արժանի Բյուզանդական կայսրության հետ Բագրատունյաց Հայաստանի հարաբերությունների միջազգային-իրավական ասպեկտները: Այստեղ ճիշտ չի լինի պետությունների միջազգային-իրավական կարգավիճակը բնորոշել կայսրության պաշտոնական մեծապետական դոկտրինի դիրքերից (նման մոտեցում կա գիտության մեջ)²¹: Այդ կայսերապետական տեսլականի համաձայն՝ կայսրը՝ «բասիլևս» տիտ-

15 Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 442:

16 Նույն տեղում, էջ 420:

17 Պողոս առաքյալ, Հռովմ., ԺԳ. 1:

18 Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, նշվ. աշխ., էջ 420:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 442:

20 Նույն տեղում:

21 Տե՛ս **Удалцова З. В.**, Дипломатия. – Культура Византии (IV-VII вв.), М., 1984, էջ 250:

ղոսի միակ կրողը, գլխավորում է շրջակա քրիստոնեական աշխարհը, իսկ մյուս բոլոր միապետները նրա որդիներն են կամ եղբայրները, որոնց նա շնորհում է կայսերական պետական հիերարխիայի տիտղոսներ: Այդպես, օրինակ, Աշոտ I-ը և Սմբատ I-ը արժանացել են «արխոնտների արխոնտ» («իշխանաց իշխան») տիտղոսին: Տվյալ փաստից եզրակացնում են Բյուզանդիայից Բագրատունիների վասալական կախվածության մասին²²:

Հետագոտողների շրջանում ընդունված մեկ այլ կարծիքի համաձայն՝ Միջնադարի պետությունները աստիճանակարգային բարդ համակարգ էին կազմում, որի դեպքում անվերապահորեն կիրառելի չէ սխեմատիկ բաժանումը սուվերեն և վասալ պետությունների²³: Այդ առթիվ նկատենք նաև, որ անկարելի է գերազնահատել դիվանագիտական նամակագրության լեզվի նշանակությունը. պատրիարք Փոտիոսին ուղղված Աշոտ I Բագրատունու պատասխան ուղերձում կան կարծրատիպային ձևակերպումներ՝ «ծառայության և հնազանդության» պարտավորություններ և կայսրությանը ծառայելուց երբեք չխուսափելու հավաստիք: Տվյալ շարլոնային արտահայտությունները (*loci communes*) խիստ անբավարար հիմք են, որպեսզի դրանց մեջ տեսնենք Աշոտ Բագրատունու կողմից Բյուզանդիայի կայսրից իր քաղաքական կախվածության ճանաչման վկայություն: Ուշագրավ է, որ նման խոստումներ տված Աշոտն իր իսկ նախաձեռնությամբ թագը ստանում է մասնատման եզրին գտնվող խալիֆայից, այլ ոչ թե այդ տարիներին հզորության վերականգնման ուղին բռնած Բյուզանդիայից: **Հակառակորդ մեծ տերություններից այդ պահին նվազ գորեղից՝ խալիֆայից, թագ ստանալու Աշոտի նախաձեռնության մեջ պարզորոշ է քաղաքական հաշվարկը, որը հետապնդում էր Բյուզանդիայի հնարավոր իրավական միջամտությունը կանխելու նպատակ:**

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ Աշոտ I-ի թագադրության լուրը ստանալուց հետո կայսր Բարսեղ I-ը ճանաչեց նրան իր «որդի սիրելի»²⁴: Չառարկելով բյուզանդական կայսեր հետ շփումներում իրենց շնորհվող «հոգևոր» կամ «սիրելի որդի» և «արխոնտների արխոնտ» կոչումներին և տիտղոսներին՝ Բագրատունիները Հայաստանում այդպիսի որակավորումներով երբեք հանդես չէին գալիս սեփական հպատակների առջև կամ միջազգային բեմահարթակում՝ արաբական պետությունների հետ հարաբերություններում: Արաբ հեղինակների համար Աշոտ I-ը կրում

22 Տե՛ս նույն տեղում:

23 Տե՛ս **Медведев И. П.**, Империя и суверенитет в Средние века: (На примере истории Византии и некоторых сопредельных государств). – Проблемы истории международных отношений, Л., 1972, էջ 412-424:

Ի. Պ. Մեդվեդևի դիտարկմամբ՝ քրիստոնեական օյկումենտի (աշխարհի) գույն կանգնած էր կայսրը՝ գահակալների և ժողովուրդների «ընտանիքի հայրը»: Նրան ամենից մոտ էին ինքնուրույն քաղաքական գահակալներից, «ըստ ազգակցության», «քրիստոնեական հարակից երկրների կառավարիչները, օրինակ Հայաստանի Բուլղարիայի, որոնք կայսեր «հոգևոր որդիներն» էին» (նույն տեղում, էջ 417):

24 Տե՛ս **Հովհաննես Կարողիկոս Դրասխանակերտցույ** Պատմութիւն Հայոց, էջ 143:

էր «մալիկ» (հայ.՝ «թագավոր») տիտղոսը²⁵: Հետաքրքրական է, որ, Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ, ամիրա Ափշինին իր ուղերձում Սմբատը կայսրից ստացած «սիրելի որդի» կոչումը դատում է «չնչին» բաների թվին:

Միջագային-իրավական ասպարեզում որպես այս կամ այն պետության սուվերենության չափանիշ կարող են դիտարկվել նրա գահակալի **ինվեստիտուրայի**՝ իշխանության ընդունման արարողակարգի բնույթը, դրա իրավական և տեսական բովանդակությունը: Ինչպես վերը նշվել է, բյուզանդական կայսրերը, «բասիլևս» տիտղոսը համարելով իրենց բացառիկ մենաշնորհը, Բագրատունի արքաներին դատում էին մեկ աստիճան ցածր՝ իբրև արխոնտների՝ իշխանների: Այս փաստից ելնելով՝ Կ. Յուզբաշյանը գտնում է, որ «միանգամայն ակնհայտ է, որ Բագրատունյաց շրջանի հայոց թագավորները չէին կարող լինել բասիլևսներ, թեև այդ տիտղոսը նրանց հեռավոր նախորդները կրում էին մ.թ.ա. VI դարի կեսից»²⁶: Այսպիսով, ըստ Կ. Յուզբաշյանի, Բագրատունի գահակալները իրենց «արքայ» կամ «թագավոր» անվանելով նկատի չունեին իրենց միապետական իշխանության բարձրագույն կարգավիճակը՝ նույնական ավանդական բասիլևսին, այլ ընդունում էին իրենց համար միահեծանության ավելի ցածր աստիճան: Այլ կերպ ասած, հենց Բագրատունիների ընկալմամբ, «թագավոր» տիտղոսը կորցրել էր իր նախկին ավանդական նշանակությունը:

Սույն հարցի լուսաբանման համար հարկ է ուշադրություն դարձնել Աշոտ III-ի օրոք թագադրության արարողակարգում կատարված մի էական նորամուծության: Մատթեոս Ուռհայեցին պատմում է. «Եւ ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ», և «յայսմ ամի օծաւ որդի Աշոտի Գագիկ արքայ»²⁷: Այսպիսով՝ Աշոտ III-ը օծվեց կաթողիկոս Անանիայի ձեռքով՝ դառնալով Աստծո օծյալ: Այդ կարևոր ակտը հարուստ էր պետաիրավական և գաղափարաբանական բովանդակությամբ, սակայն պատշաճորեն չի գնահատվել Բագրատունիների պատմությանը նվիրված գրականության մեջ²⁸, թեև եվրոպական պատմագիտությունը համակողմանիորեն լուսաբանել է միապետի օծման խորհուրդը:

Աշոտ III-ի թագադրությունը բաղկացած էր երկու գործողությունից՝ օծումից և թագադրումից: Օծման ծեսն առաջնային դարձավ արքայական

25 Տե՛ս Тер-Гевондян А. Н., նշվ. աշխ., էջ 238:

26 Юзбашян К. Н., указ. соч., с. 84.

27 **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Եր., 1991, էջ 8: Մ. Օրմանյանի կարծիքով՝ Աշոտ III-ը ուներ երկրորդ Գագիկ անունը (տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հատ. Ա, էջմիածին, 2001, սյունակ 1291):

28 Տե՛ս Dedeyan G., Le royaume des Bagratides du Sirak: entre Byzance et le califat (884-1045) - Ani capital de l'Arménie en l'an mil, Paris, 2001, էջ 82:

արժանավորությունը ստանալու և գահ բարձրանալու գործընթացում²⁹: Օծման միջոցով արքաները դառնում էին սրբազան իրենց հպատակների աչքում, «կրում իրենց վրա աստվածային կնիք»³⁰: Օծման մասին քրիստոնեական եկեղեցու տեսակետը ներկայացված է 835-882 թթ. Ռեյմսի արքեպիսկոպոս Հինկմարի (Hincmar) խոսքում. «Թող Աստված քեզ թագադրի փառքի թագով և արարի քեզ թագավոր օծմամբ Սուրբ Հոգու շնորհով»³¹: Շնորհի՛ իբրև Աստծուց տրված «գերբնական ձիրքի» մասին³² խոսում է նաև հայ պատմիչ Անանունը. Աստծո (Քրիստոսի) պարգևած շնորհով Գագիկ Արծրունին դեռ մանուկ հասակից օժտվել էր իրեն գահին արժանի դարձնող առաքինություններով՝ հոգու գործությամբ ու իմաստությամբ, բարությանբ ու «քաղցրությամբ» և, ինչպես հատուկ է ընդգծվում, քաջարի արիությանբ («...ի վերայ նորա բացափայլեալ»)՝³³: Այսպիսով՝ Սուրբ Հոգուց շնորհի ընդունմամբ արքան Աստծո ընտրյալ էր և հովանավորյալ: Արքայի օծումը խորհրդանշում էր Աստծուց տրված **ինվեստիտուրան**՝ գերագույն ատյանից սրբազործված իշխանության փոխանցումը³⁴:

Աշոտ III-ի՝ թագավոր օծվելու ողջ կարևորությունն ակնհայտ է դառնում, երբ նկատի ենք առնում հետևյալ փաստերը. 1) X դարում բյուզանդական կայսեր թագադրման արարողակարգում օծումն ընդունված չէր³⁵: 2) Ըստ Աստվածաշնչի՝ Աստծո օծյալ էին երեք անձ՝ մարգարեն, քահանայապետը և թագավորը, այսինքն՝ բասիլևսը: **Հետևաբար Աշոտ III-ը, Աստվածաշնչից ընդօրինակելով թագադրման արարողակարգը և օծման ծեսը, հաստատում էր թագավորի իր տիտղոսը որպես համարժեքային աստվածաշնչյան «թագավոր» հասկացությանը:** Այսպիսով, Բագրատունիների ըմբռնմամբ, իրենց «արքայ» և «թագաւոր» տիտղոսները նույնական էին ոչ թե հունական «արխոնտ»-ին, այլ Աստծո կամքով սրբազործված «բասիլևս»-ին: Օծման ակտով Աշոտ III-ը գաղափարաբանորեն հակադրվում էր բյուզանդական կայսրին և նրա հավակնություններին՝ հաստատելու ոչ իրավահավասար հարաբերություններ հայոց արքայի

29 Տե՛ս Bloch M., նշվ. աշխ., էջ 69:

30 Նույն տեղում, էջ 216:

31 Նույն տեղում, էջ 73:

32 Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան [եզոի]», հատ. 2, Եր., 1981, էջ 481:

33 Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, նշվ. աշխ., էջ 420:

34 Օծման նշանակության կարևոր պարզաբանում է տալիս ժակ լը Գոֆը. «Օժտված այդ գերբնական հզորությամբ՝ թագավորն այսուհետ սրբազան միջնորդ է Աստծո և իր ժողովրդի միջև» (Jacques le Goff, Aspect religieux et sacré de la monarchie française du Xe au XIII siècle. La Royauté sacrée dans le monde chrétien (Colloque de Royaumont, mars 1989), Paris, 1992, p. 20): Այդ հանգամանքը նկատի առնելը հայկական պատմական իրականության առումով թույլ է տալիս կարծել, որ, օծման շնորհիվ դառնալով սրբազան միջնորդ իր ժողովրդի և Աստծո միջև, Աշոտը փաստորեն վերադառնում էր արքայի մասին հին հայկական ավանդական հեթանոսական պատկերացումներին (տե՛ս Manassarian R., Roi d'Arménie et empereur romain, Roma-Armenia, Rome, Ed. De Luca, 1999, էջ 59-61): Քրիստոսյան Արևելքում Հայաստանում, և Արևմուտքում Ֆրանսիայում, թագադրման արարողակարգում առկա ընդհանրությունները վկայում են քրիստոնեական միապետական գաղափարաբանության միևնույն հունով ըմբռնալու, միևնույն աղբյուրից՝ Աստվածաշնչից, օրինակներ քաղելու մասին: Փոխառությունները այստեղ բացառվում են: Աշոտ I-ից սկսած ակնհայտ են հայկական միջավայրում թագավորական իշխանության հիմնավորման ինքնուրույն պրպտումները:

35 Տե՛ս Bloch M., նշվ. աշխ., էջ 473-477, Острогорский Г. А., նշվ. աշխ., էջ 37:

հետ: Որպես Աստծո օծյալ ունենալով արքայական արժանավորության՝ անձնական իշխանության գերագույն աղբյուր Աստծո կամքը՝ Աշտուղ տեսականորեն հաստատում էր իր իշխանության լիակատար անկախությունը և հավասարվում բյուզանդական կայսրին՝ իբրև Աստծո ընտրյալի:

Ընդգծենք, որ օծումը չէր կարող նշանակել արքային **լեգիտիմության** (օրինականության) հաղորդում, ինչպես կարծում են Կ. Յուզբաշյանը և Ժ. Դեդեյանը³⁶: Այսպիսով՝ անտեսվում են օծման ծեսի միջոցով գահակալի իշխանության և անձի սրբագործման քրիստոնեական պատկերացումները: Օծման հետևանքով Աշտուղի իշխանությունն արդեն Աստծուց ընծայված շնորհների երկնային իրականացումն էր: Սակայն եկեղեցու միջոցով Աստծուց շնորհ ստանալու համար գահի հավակնորդը նախապես պիտի ճանաչված լիներ իր հպատակների աչքում: Լեգիտիմությունը հավակնորդի համար թագադրվելու՝ աշխարհիկ բնույթի նախապայման էր: Այդ է վկայում Սմբատ Սպարապետը Աշտուղ III-ի թագադրվելուց առաջ. «...գի թէպէտ ունէր իշխանութիւն, այլ ոչ էր ընկալեալ զթագ թագաւորութեան ի գլուխ իւր»³⁷: Այսպիսով՝ Աշտուղ մինչև իր թագադրումը արդեն օժտված էր իշխանության իրավունքով, ճանաչված օրինական, այսինքն՝ Լեգիտիմ տիրակալ էր, ինչի հիման վրա էլ թագադրվել է³⁸: Հավանաբար մինչև օժվելը և թագադրվելը նա իշխել է արխոնտի կարգավիճակով:

36 Տե՛ս Юзбашян К. Н., նշվ. աշխ., էջ 74, Dedeyan G., նշվ. աշխ., էջ 82 («Օծման միջոցով կաթողիկոսը իշխանավորին դարձնում էր լեգիտիմ թագավոր»):

37 **Սմբատ Սպարապետի** Տարեգիրք, Վենետիկ, Ս. Ղազար, 1956, էջ 2:

38 Անկարելի է լռելյայն անցնել Կ. Յուզբաշյանի մի դրույթի կողքով, որը նա դնում է X դարում Հայաստանի պետական մասնատվածության պատճառների իր բացատրության հիմքում: Սմբատ Բագրատունու դեմ Գագիկ Արծրունու ելույթի հիմքում, ըստ Կ. Յուզբաշյանի, «ընկած էին ոչ միայն արտաքին քաղաքական հանգամանքները (արաբների շահագրգռվածությունը – Ռ. Մ.), այլև ներքին բնույթի պատճառներ: IX-X դդ. Հայաստանը ներառում էր մի քանի շրջան՝ իրարից բավականին տարբեր պատմամշակութային առումով (в историко-культурном отношении): Տարբերություններ այնքան մեծ էին, որ ստեղծել միասնական հայկական պետություն անհնարին էր...»: Այնուհետև հեղինակը շարունակում է. «Մինչսեյջուկյան Հայաստանն ընթացում էր ոչ մեծ թագավորությունների ձևավորման ճանապարհով տվյալ պատմամշակութային շրջանի սահմաններում» (Юзбашян К. Н., указ. соч., с. 68-69): Տվյալ «տեսակետի» հակագիտականությունն ակնհայտ է: Վասպուրականը, Շիրակը, Կարսը և Լոռին հայտարարվում են թե՛ պատմականորեն (այսինքն՝ իրենց սոցիալ-քաղաքական նախորդ զարգացմամբ), թե՛ մշակութապես իրարից այնքան տարբեր խզված, որ անկարելի էր դրանց պետական միավորումը: Կ. Յուզբաշյանը, ի դեպ, չի փորձում հիմնավորել այդ դրույթը, որովհետև սնան փորձը բախվելու էր երկրի պատմական և մշակութային զարգացման միասնությունը հաստատող բազմաբնույթ փաստերի (բավական է միայն հիշել Նարեկացու ստեղծագործության համազգային ժողովրդականությունը կամ Բագրատունիներից երկու դար հետո Հայաստանը վերամիավորելու Ջաջարյանների փորձը (1199-1236)): Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի ճանաչված հետազոտող Կ. Յուզբաշյանը անտեսում է Հայաստանի պետական տրոհվածության իրական պատճառները՝ ֆեոդալական հասարակարգին բնորոշ քաղաքական մասնատվածության փաստը, այն հանրաճանաչ իրողությունը, որ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հողն իրեն ամրացված աշխատուժով՝ գյուղական համայնքներով տարածքը (երկրամասը, գավառը), ֆեոդալական (սեմիֆոդիալ) տների տոհմային սեփականությունն էր պլուզերեն-վասալ փոխարարբերությունների շրջանակներում: Ուստի հողային տիրույթը անգամ երկրամասի սահմաններում ենթակա էր տվյալ իշխող գերդաստանի (Արծրունիներ, Բագրատունիներ) ներսում բաժանման, ծառայության դիմաց փոխանցման, նվիրատվության, օտարման և այլն: Այդ քաղաքական երևույթը բնորոշ էր ֆեոդալիզմի ուղին անցած եվրոպական և ասիական հասարակություններին, և Հայաստանը բացառություն չէր: Այսպիսով՝ Կ. Յուզբաշյանը, անտեսելով այդ ճշմարտությունը իշխող դասակարգի քաղաքական կազմակերպվածության ձևը և մտածելակերպը, առաջ է քաշում Հայաստանի պատմամշակութային ամբողջականությունը ժխտող թեզը: Ի վրումն ասվածի՝ նշենք, որ Գագիկ Արծրունին, ապստամբելով Սմբատ Բագրատունու դեմ, բնավ նպատակ չուներ իր իշխանությունը սահմանափակելու Վասպուրականով: Կ. Յուզբաշյանը չի հիշատակում Անանունի կողմից քանդակ նշված փաստը, որ Գագիկը ձգտում էր դառնալու ամբողջ Հայաստանի արքա: Յուսուֆի ծեռքով Գագիկի թագադրման մասին նա գրում է. «...թագաւորեցուցանէ զնա ի վերայ ամենայն Հայոց», «...տայ ի ծեսս նորա գրոյր Հայաստան աշխարհս» (Թովմա Արծրունի և Անանուն, նշվ. աշխ., էջ 442):

961 թ. Աշոտ III-ի թագադրմանը Անի մայրաքաղաքում հաղորդվեց միջազգային հնչեղություն: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ հանդիսավորությանը ներկա էին Արևելքի պետությունների՝ Բյուզանդիայի, արաբական ամիրայությունների, Բուիդների («պարսիկների») պատվիրակությունները: Հյուրերին ցուցադրվեց 100-հազարանոց բանակի զորահանդեսը:

Աստծո օծյալը տեսականորեն չէր կարող իրեն ճանաչել որևէ տերության, օրինակ՝ Բյուզանդական կայսրության հպատակ³⁹: Ուստի Բագրատունի արքաների՝ Աշոտ III-ի, Սմբատ II-ի և Գագիկ I-ի միջազգային-իրավական դիրքի առումով բնավ կիրառելի չէ «վասալություն» հասկացությունը՝ իր ստույգ նշանակությամբ⁴⁰: Այդ իրողությունը հաստատվում էր հայ-բյուզանդական հարաբերություններով: Աշոտ III-ը Հովհաննես Չմշկիկի և Գագիկ I-ը Բարսեղ II-ի նկատմամբ ցուցաբերել են միանգամայն անկախ կեցվածք, իսկ Աշոտ III-ը անգամ ցուցադրել է իր ռազմուժը:

Աստծո օծյալ Աշոտ III-ն իր ներքին քաղաքական գործունեության մեջ հետևում էր Հիսուս Քրիստոսի օրինակին: Բարեգործությունը և հոգատարությունը չունևոր ու թշվառ խավերի ներկայացուցիչների նկատմամբ դառնում են նրա կառավարման հատկանշական գիծը: Արքան իր պալատում ժողովում էր և անձամբ խնամում ու կերակրում հիվանդներին և հաշմանդամներին: Այս գործելակերպի քրիստոնեական գաղափարաբանական շարժառիթներն ակնհայտ են: Հայաստանի քրիստոնյա միապետների շարքում Աշոտ III Ողորմածը բացառիկ օրինակ է ներկայացնում: Իր վարքագծով նա հետևողականորեն կյանքի էր կոչում ողորմած քրիստոնյա թագավորի իդեալը:

Կայսրության հետ իրենց հավասարությունը տեսականորեն հիմնավորելու Բագրատունիների ձգտումն արտացոլվեց աստվածաշնչյան իսրայելական արքա Դավիթից նրանց սերման մասին լեգենդում⁴¹: Արդեն Աշոտ I-ի օրոք ձանաչվում է Աբրահամի ցեղից Բագրատունիների սերվելու վար-

Ուշադրության են արժանի Բագրատունյաց թագավորության պետական տրոհման պատճառների մասին Ռ. Գրոսսեի խորթաբախանց դատողությունները: Ֆրանսիացի ակադեմիկոս արևելագետ-պատմաբանը շեշտում է այդ գործընթացում սուբյեկտիվ գործոնի բացասական դերը, վերջին հաշվով ավատատիրական տոհմային շահի գերակայությունը համապետականի նկատմամբ: Ռ. Գրոսսեն գրում է. «Հօգուտ արքայազունների բաժնեկալվածքների բաշխման համակարգն ուներ այստեղ (Հայաստանում – Ռ. Ս.) նույն հետևանքները, ինչ կապետիոնյան Ֆրանսիայում: Այսպիսով՝ մենք ակնատես ենք Հայաստանի տարածքի, ինչպես նաև սուվերենության մասնատման մի պահի, երբ Աբբասյանների աշխարհակալության փլուզման հետևանքով քրիստոնեությանը (christienté) ընծեռած անդորրում Հայաստանը պիտի օգտվեր հանգամանքներից իր ուժերը համախմբելու և իրեն արժանի դեր կատարելու համար» (Grousset R., op. cit., p. 483):

39 Նշենք, որ Բագրատունի արքայի քաղաքական-գաղափարաբանական այդ կտրուկ որոշակի զուգահեռ է գտնում Բյուզանդական կայսրության հավակնություններին հակադրվելու Բուլղարիայի կառավարչի փորձում, երբ վերջինս իր «իշխան» տիտղոսին հավելեց «Աստծուց» որակումը, այսինքն, ինչպես նշում է Ի. Պ. Սեդվեդկը, շեշտեց իր լիակատար անկախությունը կայսրից (տես Медведев И. П., նշվ. աշխ., էջ 420):

40 Հիշեցնենք, որ վասալը միջազգային հարաբերությունների սուբյեկտ չէր. ինքնուրույնաբար հանդես չէր գալիս միջազգային բեմահարթակում, չէր կրնում պայմանագրեր, չէր սկսում պատերազմներ: Նրա տարածքը ծառայության դիմաց պուզերենից ստացած հողային տիրույթն էր, որը ժառանգին ինքնուրույնաբար փոխանցելու իրավունքը ասիմանափակ էր. անհրաժեշտ էր պուզերենի բարձրագույն ատյանի սանկցիան:

41 Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ Բագրատունի տոհմի նախահայր Բագրատը «ի Շամբաթայ Հրէ էր, զորմէ համբաւեն լինել յազգէ Դաւթի.....» (տես Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, էջ 28):

կածը (Աստղիկ, 3, II): Հայկի տոհմից առաջին թագավորները իբր Նաբուգո-դոնոսորին խնդրել են իրենց համար բարելոնյան գերությունից ազատ արձակել Աշոտի նախահայրերին: Ամենայն հավանականությամբ, այս առասպելը մովսիսականություն ընդունած և այդ պատճառով հալածված հայ մեծատոհմիկ Բագարատի (Շամբատ Բագարատի) մասին Մովսես Խո-րենացու պահպանած պատմության զարգացումն է⁴²:

Դավիթ արքայից Բագրատունիների սերման մասին վարկածը հիշատակվում է Կոստանտինոս Ծիրանացու աշխատության մեջ, թեև հեղինակը խոսում է Բագրատունիների վրաց տոհմաճյուղի մասին⁴³: Բագրատունիների տոհմաբանական ծառը մինչև աստվածաշնչյան Դավթին հասցնելը պայմանավորված էր թագադրման արարողության մեջ օժման կարգի նորանուծությամբ, այսինքն՝ ծառայում էր որպես հիմնավորում աստվածաշնչյան թագադրության փորձի յուրացման համար: Թերևս անկարելի է անտեսել Մատթեոս Ուռհայեցու երկու անգամ արված այն պնդումները, որ Աշոտ III-ը օծվեց «իր հայրերի օժման» սովորույթի համաձայն («...ըստ առաջին օժման հարցն իւրոց»)⁴⁴: Այստեղ կարելի է ենթադրել, որ նկատի են առնվում Բագրատունիների առասպելաբանական նախնիները՝ թագավորներ Դավիթն ու Սողոմոնը, քան թե Աշոտի տոհմակից անմիջական նախորդները՝ Աշոտ I-ը և Սմբատը, քանի որ նրանց թագադրման արարողակարգում օժման ծեսը չէր կիրառվել⁴⁵:

Բագրատունի արքաների հրեական ծագման վարկածի ի հայտ գալը կարող էր պայմանավորված լինել կարծես ևս մի գաղափարաբանական խնդրով: Բյուզանդիայի Բարսեղ I (867-886) կայսրն իր տոհմի ծագումը կապում էր հայ Արշակունիների, իսկ նրանց միջոցով՝ նաև Աքեմենյանների հետ: Անկասկած, այդ վարկածը հղի էր Բագրատունյաց թագավորության գոյությանն ուղղված սպառնալիքով: Այդ տեսանկյունից հրատապ էին դառնում Բագրատունյաց տոհմի հնացման ու ազնվականացման խնդիրը և առաջին օձյալ արքաներից սերված հորջորջվելը:

Բյուզանդական կողմը, բնական է, որ չէր ձանաչում հայոց թագավորներին որպես Աստծո օձյալների: 1042 թ. Բյուզանդական կայսրության սպառնալիքին դիմակայման ռազմաքաղաքական ծանր պայմաններում տեղի ունեցավ Մեծ Հայքի (Անիի թագավորություն) Բագրատունի վերջին

42 Տե՛ս **Манасерян Р. Л.**, К вопросу о вероисповедании населения городов Армении (I в. до н.э. – IV в. н.э.), «ՊԲՀ», Եր., 1989, N 2, էջ 198-204, **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 156-166:

43 XI դարի սկզբի վրաց Բագրատունիների պատմության հեղինակ Սմբատի հաղորդմամբ՝ Բագրատունիները (յոթ եղբայր), գաղթելով փիլիստիմացիների երկրից, հաստատվում են նախ Հայաստանում (Եկեղյաց գավառում), իսկ այնուհետև նրանցից չորսը տեղափոխվում են Վրաստան (տե՛ս **Մելիքսեթ Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Եր., 1934, էջ 136):

44 Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 8

45 Ինչպես նշում է 885 թ. Աշոտ I-ի թագադրման մասին Հովհաննես Դրասխանակերտցին, հայրապետը աստվածային օրհնություն կատարեց «փոխանակ օժման սրուակի իւղոյն» (տե՛ս **Հովհաննես Կարողիկոս Դրասխանակերտցու** Պատմութիւն Հայոց, էջ 142): Ինչպես նշում է Մ. Օրմանյանը, օժման արարողությունը «տակալին չէր կատարուած Հայոց թագաւորներու վրայ» (**Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., սյունակ 1294):

արքայի՝ պատանի Գագիկ II-ի թագադրությունը: Մատթեոս Ուռհայեցին նշում է Գագիկի օծվելու փաստը՝ ավելացնելով այն ուշագրավ տեղեկությունը, որ Գագիկին օծեցին համայն Հայաստանի թագավոր⁴⁶: Այդ ձևակերպումը բովանդակում էր բացահայտ մարտակոչ Բյուզանդական կայսրությանը, որն արդեն հասցրել էր զավթել հայկական հողերի մեծ մասը: Նույն պատմիչը նշում է, որ Սուրբ Հոգու շնորհով Գագիկը հաջողությամբ իշխեց երկու տարի⁴⁷:

Այսպիսով՝ Բագրատունյաց Հայաստանում թագավորական սուվերենության (ինքնիշխանության) գաղափարի հիմքում հինաստվածաշնչյան և քրիստոնեական համապատասխան պատկերացումներն էին, ինչն իր արտահայտությունը գտավ թագադրման արարողակարգի զարգացման մեջ: Այդ գաղափարի անփոփոխ նպատակն էր ընդդիմությունը Բյուզանդիայի կայսերական, մեծապետական գաղափարաբանությանը:

Ռուբեն Լ. Մանասերյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արտաշեսյան և Արշակունյաց Հայաստանների և հարևան երկրների՝ Հռոմի, Պարթևստանի պատմության հիմնահարցերը, միջազգային հարաբերությունները, արտաքին քաղաքականությունը, դիվանագիտությունը և պետական գաղափարաբանությունը:

Summary

THE KING AND GOD

The ideological foundations of royal sovereignty in the Bagratid Armenia

Ruben L. Manasserian

Doctor of Sciences in History

Key words – Armenia, the Bagratunis, the Artsrunis, Byzantine Empire, Basileus, king, consecration, grace, investiture, sovereignty.

The coronation rite of the Bagratids went through a series of stages that marked the evolution of ideas about royal power as divine institution. Ashot I Bagratid was proclaimed king at a meeting of the highest nobility, i.e., in the adoption of the royal title, the priority was the collective will – a secular act, as an

46 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 96 («...օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն սրբոյ...»):

47 Տե՛ս նույն տեղում («Յայնժամ եղև յաջողեալ երկու ան թագաւորութիւնն Գագկայ շնորհօք Հոգւոյն սրբոյ»):

expression of divine will. In the year of 885 Ashot I Bagratid was crowned with the participation of the catholicos, who personally placed the crown on him and gave his blessing. The participation of the highest church hierarchy in the act of coronation conveyed a character of a supreme divine sanction to the investiture. In the year 961 Ashot III the Merciful introduced the rite of anointing in the coronation which meant the consecration of the power and personality of the king, endowing him with God-sent grace (Holy Spirit).

According to church ideas, the king – the anointed of God, was elevated to the rank of a sacred mediator between God and the people. The introduction of the rite of anointing in the coronation by the Bagratids also had external political goals – it was directed against the great-power encroachments of the Byzantine emperors, who monopolized the right to bear the title of Basileus. Byzantium recognized only the title of archon (prince) for the Armenian monarch. Based on this fact, a view was expressed in science by K. N. Yuzbashyan, that the Bagratids, in accordance with the great-power position of Byzantium, equated their title of king with the title of archon, in other words, calling themselves kings, they meant themselves princes. This view does not find confirmation in the rite of anointing of the monarch. Borrowing it from the Bible, Ashot III the Merciful asserted his title of king as identical to that of King David. In the justification of the right of the Bagratids to the rite of anointing, as early as the beginning of the 10th century a legend was put forward about their origin from the family of the biblical David. The origins of this legend are rooted in the history of Moses of Khoren on the conversion of prince Bagarat – the ancestor of the Bagratids into Judaism in the II c. AD.

Резюме

ЦАРЬ И БОГ

Идеологические основы царского суверенитета в
Багратидской Армении

Рубен Л. Манасерян
Доктор ист. наук

Ключевые слова – Армения, Багратиды, Арцруни, Византийская империя, Басилевс, царь-помазаник, благодать, инвеститура, суверенитет.

Обряд коронации Багратидов прошел ряд этапов, знаменовавших эволюцию в представлениях об богоустановленности царской власти. Ашот I

Багратид был провозглашён царём на собрании высшей знати, т.е. в принятии царского титула приоритетным явилось коллективное волеизъявление – светский акт, как выражение божественной воли. В 885 г. Ашот I Багратид был коронован при участии католикоса, лично возложившего на него корону и давшего своё благословение. Участие высшего церковного иерарха в акте коронации придавало инвеституре характер верховной божественной санкции.

В 961 г. Ашот III Милостивый ввёл в коронацию обряд миропомазания, означавший царской власти и личности монарха, наделение его благодатью ниспосланной богом (Святым Духом). Согласно церковным представлениям, царь-помазанник божий, возводился в ранг священного посредника между богом и народом. Введение обряда помазания на царство в обряд коронации Багратидов имело и внешнеполитические цели, было направлено против великодержавных устремлений византийских императоров, монополизировавших за собою право на ношение титула басилевса. За армянским монархом Византия признавала титул архонта. На основе данного факта К.Н. Юзбашьяном был высказан взгляд, согласно которому Багратиды, в соответствии с великодержавной позицией Византии, приравнивали свой титул царя к титулу архонта, иначе говоря, называя себя царями, подразумевали себя князьями. Данная точка зрения не находит подтверждения в самом обряде миропомазания монарха. Заимствовав его из Библии, Ашот III Милостивый утверждал свой титул царя в качестве тождественного титулу царя Давида. В обоснование права Багратидов на обряд миропомазания на царство ещё в начале X века была создана легенда об их происхождении из рода библейского царя Давида. Истоки данной легенды кроются в сохранённой Моисеем Хоренским истории об обращении в иудаизм во II веке н.э. предка Багратидов, армянского князя Багарата.

REFERENCES

1. “Nor bargirk‘ Haykazean lezui”, hat. 2, Yer., 1981 (In Armenian).
2. **Aրակ‘elyan B.**, Hayastanē Bagratunyats‘ zhamanakashrjanum, “Hay zhoghovrdi patmut‘yun”, hat. 3, Yer., 1976 (In Armenian).
3. **Hovhannes Kat‘oghikos Draskhanakertts‘woj Patmut‘iwn Hayots‘**, Yer., 1996 (In Armenian).
4. **Juzbashjan K. N.**, Armjanskije gosudarstva epoxi Bagratidov IX-XIvv., M., 1988 (In Russian).
5. **Korovin Je. A.**, Istorija mezhdunarodnogo prava (ot drevnosti do konca XVIII veka), M., 1946 (In Russian).

6. **Kurbatov G. L.**, Politicheskaja teorija v rannej Vizantii. Ideologija imperatorskoj vlasti I aristokratskaja pozicija. – Kul'tura Vizantii. IV – pervaja polovina VIIv., M., 1984 (**In Russian**).
7. **Leo**, Hayots' patmut'yun, hat. 2, Yer., 1947 (**In Armenian**).
8. **Litavrin G. G.**, Politicheskaja teorija v Vizantii s poloviny VI veka do nachala XIII. – Kul'tura Vizantii (VI-XIIv.), M., 1989 (**In Russian**).
9. **Manaserjan R. L.**, K voprosu o veroispovedanii naselenija gorodov Armenii (I v. do n.e. – IV v. n.e.), "PBH", Yer., 1989, N 2, ěj 198-204 (**In Russian**).
10. **Manaseryan R.**, Hayastanĕ Artavazdits' minch'ev Trdat Mets, Yer., 1997 (**In Armenian**).
11. **Matt'ĕos Uřhayets'i**, Zhamanakagrut'iwn, Yer., 1991 (**In Armenian**).
12. **Medvedev I. P.**, Imperija I suverenitet v Srednije veka: (Na primere istorii Vizantii I nekotoryx sopredel'nyx gosudarstv). – Problemy istorii mezhdunarodnyx otnoshenij, L., 1972 (**In Russian**).
13. **Melik'set' Bek L.**, Vrats' aghbyurnerĕ Hayastani yev hayeri masin, hat. A, Yer., 1934 (**In Armenian**).
14. **Ostrogorskij G. A.**, Evoljucija vizantijskogo obrjada koronovanija. – Vizantija, Juzhnyje slavjane I drevnjaja Rus'. Zapadnaja Jevropa, M., 1973 (**In Russian**).
15. **Smbat Sparapeti** taregirk', Venetik, S. Ghazar, 1956 (**In Armenian**).
16. **Ter-Gevondjan A.**, Armenija I arabskij Xalifat, Yer., 1977 (**In Russian**).
17. **T'ovma Artsruni yev Ananun**, Patmut'iwn Tann Artsruneats', Yer., 1985 (**In Armenian**).
18. **Udal'cova Z. V.**, Diplomacija. – Kul'tura Vizantii (IV-VIIv.), M., 1984 (**In Russian**).
19. **Vardanyan V.**, Bagratunyats' t'agavorut'yan verelk'n u hzorats'umĕ (X d. 30-akan t't'. – XI d. skizb), "Hayots' patmut'yun", hat. II, girk' yerkrord, Yer., 2014 (**In Armenian**).